

55 Եւ աշտարակօք շինեալ: Եւ ի դուռն սարային
 բազում սուսերամերկ զինաւորք. եւ ի ձեռին
 սամենեցուն լայնասլաք զեղարդք, որ փայլ-
 զփայլի տային. եւ զգետտ էր նոցա այլաձեւ
 եւ ուրիշ ազգ. այլ եւ ունէին երկայն մօրուս.
 զի Պրանկն չունի մօրուս, բայց միայն սոքա:
 60 Եւ ասին մեզ թէ չունի Փափն քան զգոսա
 հաւատարիմ եւ սիրական ծառայ. եւ են երեք-
 հարիւր: Եւ յորժամ Փափն տեղ երթայ կամ
 ժամ, սոքա ի մէջ պիտի առնուն եւ ինքեանք
 երկու կողմանց գնան: Եւ ասին թէ սոքա են,
 65 որ Լուսաւորիչն եթող անդ՝ յորժամ էրն ի
 Հոռոմ, եւ ա՛ռ ի նոցանէ երեքհարիւր այր.
 նոքա իւրեանց հաւատն կու պահեն, իսկ մերն
 դարձան³:

70 Եւ իբրեւ մտաք ի սարայրն, ասին թէ
 Եօթն դուռն պիտի անցնիք: Ի մօէն դռանն
 դարպասնին դարգարած էր ազգի ազգի լի-
 պասով. եւ առաստաղն ոսկով նկարած:

75 Եւ առաջինն սկէռլէթ էր չորս պատն.
 զի աշխարհն քրիստոնէից չի նստին ի վերայ
 զեանի եւ ոչ զարդարեն զգետինն որպէս
 Թուրքի աշխարհն. եւ նստին ի վերայ աթոռոց
 եւ սկէմլոց. այլ եւ ունին սեղան մեծ եւ

54 յաշտարակօք: — 56 փայլսփայլն... այլ եւ
 ձեւ: — 71 դարպասին:

³ Այսպէս հաւատացուցած են մեր ուղեգրին:
 Քահանայապետին պահակը սկսեալ 1505էն մինչև մեր
 օրերը կազմուած է բնիկ զուրիցերիացիներէ: